ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բազեյան Կ. (Հովհ. Շարամբեյանի անվ. ժողովրդական ստեղծագործության կենտրոն, Հայաստան)
bazeyan60@yandex.ru

Բանալի բառեր՝ էթնիկ մշակույթ, ժողովրդական արվեստ, մշակութային ժառանգություն, զարդանախշ, պար, երաժշտություն:

Հայ ժողովրդի մշակութային ժառանգության մեջ իր որոշակի տեղն ունի ժողովրդական ստեղծագործությունը, որը հոգևոր մշակույթում արտահայտվել է բանահյուսության, երաժշտության, պարերի մեջ, նյութականում՝ կիրառական-գեղազարդման արվեստի բազմազան տեսակներում՝ զարմանահրաշ զարդանախշերով ու զարդահորինվածքներով: Ժողովրդական արվեստը կրում է էթնիկ բնավորության խտացված ձևերը, ուստի ուսումնասիրողներն այն համարում են էթնիկական ինքնագիտակցության ձևերից մեկը: Հազարամյակների ընթացքում, անցնելով զարգացման բարդ ուղի, ազդվելով այլ էթնիկ մշակույթներից, միաժամանակ փոխադարձաբար ներազդելով դրանց վրա, այն հասել է մեզ՝ հիմնականում պահպանելով ազգային ինքնատիպ նկարագիրը:

Ձեկուցման մեջ փորձ է արվելու ներկայացնել ժողովրդական արվեստի տեղն ազգային մշակույթի համակարգում՝ արժևորել նրա դերն ու գործառույթները:

THE PLACE AND ROLE OF FOLK ART IN ARMENIAN CULTURAL HERITAGE

Bazeyan K. (Folk Art Center after H. Sharambeyan, Armenia)